ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿԻ Ն. ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Առարկան

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա – ՏԱՐԲԵՐԱԿՎԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ – ՀԱՍՄԻԿ ԳԱՐԱՆՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆ.ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ – ԱՂԱՎՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Աշտարակ 2023

Բովանդկություն

1.Ներածություն ----------3

2.Հետազոտական աշխատանքի հիմնական մաս----------5

3.մենախոսություն----------6

4. Գլուխ 1.2- Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառումը----------7

5. Գլուխ 1.3 - Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառման ձևերը--------8

6. Գլուխ 1.3 Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառումը իմ դասին----11

7. Գլուխ 1.4 Տարբերակված ուսուցում մեթոդի արժևորումը----------15

4.Եզրակացություն----------15

5Օգտագործված աղբյուրներ----------16

5.Սահիկաշար----------18

Նախաբան

# «ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ» մեթոդ

«Միայն այն ուսուցիչն է հմուտ, ով լավ
գիտի թե ի՞նչ է պետք իմանան իր
աշակերտները և ի՞նչ ճանապարհով
է պետք հասնել այդ գիտելիքներին»

/Վ.Ա. սուխումլինսկի/

Հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր սովորողների կարիքները բավարարելու ամենաարդյունավետ ուղիներից մեկն էլ տարբերակված ուսուցում իրականացնելն է: Տարբերակված ուսուցման ռազմավարության նպատակն է ընդհանուր կրթության, բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ նրա ընդունակությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Տարբերակված ուսուցման պայմաններում, ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերակվում են: Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝

1. Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները

2. Խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների

3. Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ընտրել եմ «Տարբերակված ուսուցում» թեման, քանի որ այն երբևէ ժամանակավրեպ չի կարող լինել, կիրառելի է բոլոր դասարաններում, գրեթե բոլոր դասերին, որովհետև դասարաններում սովողները տարամակարդակ են, ունեն տարբեր նախասիրություններ, ունակություններ, հակումներ, և, որ շատ կարևոր է, աշակերտների մոտ նկատվում է սուվորելու նկատմամբ հետաքրքրության նվազում, փոխարենը հետաքրքրություններն ավելանում են սոցիալական ցանցերի ուղղությամբ : Գիտելիքից բացի սովորողին ահրաժեշտ է նաև դրանք կիրառելու իրական կարողություններ և հմտություններ՝ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերը ու հնարավորությունները: Այս հետազոտական աշխատանքը ինձ հնարավորություն կտա ձեռք բերելով նոր գիտելիքներ այլ հետազոտողների փորձից՝ այսուհետ, դասի ժամանակ կիրառել համապատասխան նոր մեթոդներ, մոտեցումներ, մոտիվացնող միջոցներ տարամակարդակ աշակերտների ուսումնական գործընթացը խթանելու, ավելի արդյունավետ ու հետաքրքիր կազմակերպելու և դարձնելու համար: Որոշ դիտարկումներ, վերլուծություններ, հուզող թեմայով զրույցներ (այլ մանկավարժների, ծնողների ու աշակերտների հետ) անցկացնելուց հետո՝ հանգել եմ այն եզրակացությանը, որ դասի ժամանակ պետք է հաճախակի կիրառել նոր, հետաքրքիր, տարբերակվող, մոտիվացնող մեթոդներ, կիրառել նոր ռազմավարություններ: Այսինքն՝ ուսուցումը պետք է լինի անհատական մոտեցումով և տարբերակված: Կարծում եմ, այս հետազոտական աշխատանքը կնպաստի Իրականացնել, ուղղորդված աշխատանքի միջոցով հեշտացնել, հետաքրքիր դարձնել ուսումնառության գործընթացը տարամակարդակ գիտելիքներ ունեցող սովորողների համար:

<< Աշակերտներին պետք է սիրով գրավել և երբեմն՝ զիջումով նվաճել>> /

Ն. Աղբալյան /

Այս մեթոդի կարևոր էությունը, որն ինքնին հետաքրքիրր է և շատ արդյունավետ, կայանում է հետևյալում՝

. Ուսումնառության ընթացքում աշակերտը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակցի:

. Ուսուցիչը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գերծընթացը կազմակերպող, խորհրդատու, և որպես գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցում է որոնողական աշխատանքներին:

Ինձ բավականին հետաքրքրեց այս մեթոդի կիրառելիությունը դասապրոցեսի ընթացքում և ես որոշեցի հետազոտություն կատարել տեսական և գործնական ոլորտներում: Ուսումնասիրեցի որոշ հեղինակների կատարած հետաղոտությունները

և ինքս այն կիրառեցի իմ դասերի ընթացքում, որպեսզի կիրառելով մեթոդը՝ ավելի ընդլայնեմ տեղեկություններս և եզրակացնեմ թե որչափո՞վ է դրա կիրառումն արդյունավետ տարբեր չափի գիտելիքներ և ունակություններ ունեցող աշակերտների հետ աշխատելու ընթացքում:

# Հետազոտական աշխատանքի հիմնական մաս

## Գլուխ 1- Տարբերակված ուսուցման բնույթը

Օրեցօր կրթության ոլորտում տեղի են ունենում նորանոր բարեփոխումներ, մշակվում են դասավանդման բազմազան ու նոր մեթոդներ,ռազմավարություններ՝ սովորողների գործունեությունը խթանելու, ակտիվացնելու, գիտելիքները հարստացնելու, առաջադիմությունը ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր դաս տարբերվում է մյուսից իր առանձնահատկություններով, կիրառված մեթոդներով, աշակերտների համագործակցային պատրաստակամությամբ: Կան մեթոդներ, որոնք հարմար ու համապատասխան են մի դասի ու դասարանի համար, սակայն հարմար ու գործածելի չեն այլ դասի կամ դասարանի համար: Ուսուցման ձևերից մեկն էլ տարբերակված ուսուցումն է, որը հիմնված է սովորողների կարիքային առանձնահատկությունների ու նախասիրությունների վրա: Տարբերակված ուսուցումը, դա ուսուցչի կողմից, միևնույն բովանդակությունը մատուցելիս, տարբեր ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողությունների մակարդակը: Ըստ ամերիկացի մանկավարժ Քերոլ Էն Թոմինսոնի՝

տարբերակված ուսուցման տեսակները լինում են՝ [1] 1. **Ըստ բովանդակության դասակարգման, 2.ըստ գործողությունների, 3.ըստ վերջնարդյունքների, 4 ըստ միջավայրի:** [i]

## .1 Ուսուցումն ըստ բովանդակության դասակարգման

Պարունակում է պետական չափորոշչի պահանջները: Բնականաբար, ոչ բոլոր սոորողները կարող են հավասարաչափ տիրապետել հանձնարարվող նյութի բովանդակությանը: Աշակերտներից ոմանք առավել հակվածություն են դրսևորում դեպի հումանիտար առարկաները, ոմանք՝ երաժշտական, մյուսները կինեստետիկ, լսողական կամ տեսողական հակվածություն ունեն: Այդուհանդերձ աշակերտները տարբերվում են իրենց ցանկություններով, մղումներով, հետաքրքրություններով, հակումներով, ուղեղի կիսագնդերի դոմինանտությամբ:

Տարբերակված ուսուցոմ նշանակում է յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, մետաճանաչողական պահանջմունքների բավարարման մաքսիմալ զարգացման համար: Տարբերակված ուսուցման ժամանակ պետք է զգուշավոր լինել, որ որևէ մեկը չպիտակավորվի ու բոլորն ստանան իրենց համապատասխան օպտիմալ աշխատանք: Ուսուցիչը կարող է մի խմբի հանձնարարություն տալ ինքնուրույն աշխատանք կատարելու, մյուս խմբի հետ ինքն աշխատել: Տարբերակված ուսուցումը հնարավորություն է ստեղծում ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

## .2 Ուսուցումն ըստ գործողությունների

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են: Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,

2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների

3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը: ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է: Օրինակ՝

. 1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացնելով գլխավոր մտքերը:

---

1

. 2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան և հարցադրումներ:

. 3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտին կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը: Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար: Հնարավոր տարբերակներ են նաև հետևյալները

. 1.Աշակերտն ինքն է ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի:

. 2-րդ դեպքում ուսուցիչը կարող է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին:

. 3-րդ դեպքում աշակերտները իրենք են որոշում առաջադրանքի բարդությունը, իրենք էլ ընտրություն կատարում:Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտները իրենք գտնել ու առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը: Տարբերակված հրահանգը կարող է օգտագործվել ցանկացած առարկայական ոլորտներում: Այն կարող է ներառել

1.Դասագրքեր և բառախաղ՝ վիզուալ սովորողների համար,

2.Աուդիո գրքերով՝ աուտիկ հակումներով սովորողների համար,

3.Ինտերակտիվ, օնլայն միջոցներ՝ կինեսթետիկ սովորողների համար:

## Գլուխ 1.2- Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառումը

Սովորողներին բազմապիսի զգայական ուսուցողական նյութերի տրամադրումը և դրանց բաշխումը ըստ սովորողի հոգեհուզական խառնվածքի, ենթադրում է տարբերակված ուսուցման մեթոդների կիրառում, ինչն էլ ոգևորում է աշակերտին, մոտիվացնում նրա մասնակցությունը դասապրոցեսին: Դասային հանձնարարությունները հիմնված են լինում այն բանի վրա, թե ինչպե՞ս է աշակերտը անհատական մոտեցում ցուցաբերում սովորելուն: Ոմանք կարող են հանձնարարություն կատարել թղթի վրա, աղյուսակ գծել, պաստառ ստեղծել կամ նկարել, իսկ մյուսները կարող են ընտրել բանավոր զեկույց, երրորդները ստեղծել թվարկածների համակցությունը: Տարբերակումը կարող է նաև թելադրել, թե ինչպե՞ս է դասասենյակը կառուցվելու և կահավորվելու: Սովորողները կարող են բաժանվել խմբերի, որոնց հիման վրա, նրանց կտրամադրվեն տարածքներ: Տարբերակված հրահանգը կարող է օգտագործվել ցանկացած առարկայական ոլորտներում: Այն կարող

է ներառել դասագրքեր և բառախաղեր, աուդիո գրքեր, օնլայն հարթակներ, բազմապիսի զգայական ուսուցողական նյութեր:: Տարբերակված ուսուցման ժամանակ աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգավորումներով առաջադրանքներ. գծագրեր, նկարներ: Աշակերտն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել դրանց օգնությանը, կարող է չդիմել: Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է իրականացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները: Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են, սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել ընկերների հետ: Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է: Օրինակ՝ տարբերակված ուսուցում կազմակերպելիս, ուսուցիչը պետք է ունենա հստակ նպատակադրում՝ Ելնելով ուսումնական նյութի բարդության աստիճանից, ծավալից և այլն: Հհաշվի առնելով դասարանի ուժերը, դասարանը ,,բաժանվում է,, խմբերի:

1 Խումբ--Ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

2 խումբ—Աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսումնական նյութը և ունեն բացթողումներ: Նրանց հետ տարվում են համապատասխան աշխատանքներ:

3 խումբ—Աշակերտներ, որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում: Նրանց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ:

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու կարող է լինել ուսուցչի օգնականը և 1-ին խմբի աշակերտները, իսկ 3-րդ խմբի աշակերտների համար՝ 1-ին և 2-րդ խմբի աշակերտները:

## Գլուխ 1.3 - Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառման ձևերը

Միջոց 3. Ինտերակտիվ մեթոդ

Հարկավոր է հաշվի առնել, որ եթե խմբեր ձևավորվելիս, նրանցում ընդգրկվել են համախոհ, նման մտածողության, ընդունակությունների տեր երեխաներ, ապա կարելի է նրանց տալ տարբեր առաջադրանքներ և, ամենևին, պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ: Դա հնարավորություն է տալիս ստեղծել ավելի մեծ խմբեր: Այսպիսի խումբը միատարր կամ մոնոգեն է կոչվում: Կարող են ստեղծվել նաև ոչ մոնոգեն խմբեր, որոնք ընդգրկում են տարբեր ունակություններ, հետաքրքրություններ, մղումներ ունեցող աշակերտներ: Այս խմբերում աշակերտները կարող են իրար օգնել, աջակցել, սովորեցնել: Խմբում իրականացվում է դերաբաշխում, ինչը նպաստում է պատասխանատվության ձևավորմանը, բարձրացմանը ինքն՝ իր և խմբի նկատմամբ: Կարծում եմ, որ հետևելով այս նպատակադրումներին, աշակերտական խմբերում անպայման դրական տեղաշարժ կունենանք: Այս մեթոդի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ թույլ չի տալիս աշակերտին զգալ իրեն թույլ՝ ուժեղ աշակերտների մեջ: Բոլորը հավասար են այստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը:

## 3. Ուսուցումն ըստ վերջնարդյունքների

Աշակերտները ներկայացնում են յուրացրած նյութը բանավոր, գրավոր եղանակով, ՏՀՏ-ի միջոցով սահիկաշարով, հավելյալ աղբյուրներից վերցրված ներկայացվող նյութով, դերային խաղերով և այլ եղանակներով: Դրսևորվում է բովանդակությունն արտահայտելու հմտություններ: Աշակերտը վերջնարդյունքում ներկայացնում է հանձնարարված նյութը թեստի, նախագծի, հաշվետվության, սահիկաշարի, ռեֆերատի և այլն ձևերով:

## 4. Ուսուցումն ըստ Ուսումնական միջավայրի

Ուսումնական միջավայր ասելով՝ հասկանում ենք ոչ միայն ֆիզկական, այլև հոգեբանական միջավայր: Օրինակ՝ խաղեր, դասագրքեր, քարտեր, օնլայն միջոցներ, նկարներ, սահիկաշար և այլ միջոցներ, որոնք կստեղծեն դասի գործընթացին տրամադրող հաճելի, հետաքրքրող, յուրաքանչյուրին մոտիվացնող միջավայր:[ii] Ուսուցման միջավայր կարելի է ստեղծել հեռավար դասընթաց կազմակերպելով, առանձին դասասենյակներում (երբ ուսուցիչը անցնում է դասարանից դասարան՝

տալով տարբերակված հաբձնարարություններ) , գրադարանում՝ ապահովելով անաղմուկ ու հանգիստ միջավայր: Այս հնարավորությունները նույնպես հետաքրքիր ու արդյունավետ են դարձնում դասը՝ ելնելով հետազոտական արդյունքներից: Այս ամենը կախված են առարկայի բովանդակությունից, կրթությանը ներկայացվող պահանջներից, դասավանդման եղանակից, աշակերտների անհատական կարիքներից: Տարբերակված ուսուցում նշանակում է նաև ուսման դժվարություններ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրում խմբերում ըստ նրանց ընդունակությունների ու կարողությունների: Այստեղ կարևոր է «**Մոտեցում»** մեթոդը[iii], ըստ որի աշակերտները համագործակցում են ուսուցչի հետ, օգնում նրան դասապրոցեսում, փոխօգնություն ցուցաբերում միմյանց : Տարբերակված ուսուցման համար շատ կարևոր է ուսուցման ճիշտ կազմակերպումը, ռազմավարությունը, մեթոդներն ու հնարները: Ուսուցիչը նախապես ուսումնասիրում և տարբերակում է իր սաների անհատական հոգեբանական խառնվածքը, որոշում թե յուրաքանչյուր աշակերտին՝ նրա խառնվածքին համապատասխան, ինչպիսի՞ հանձնարարություն տալ, լավագույն արդյունք ակնկալելու համար, այնուհետև ընտրում համապատասխան հանձնարարությունը, որը կարող է լինել տեսողական բնույթի ( դասագիրք, տեսադաս), լսողական բնույթի (աուդիոդասագրքեր), կինեստետիկ բնույթի (առցանց ինտերակտիվ հանձնարարություն): Խմբային աշխատանք իրականացնելիս կարելի է ստեղծել «կրթակայաններ» ըստ սովորողների հետաքրքրությունների հանձնարարել թեմաները, բազմաշերտ փոխկապակցված նյութերը: Երբ ընտրում ենք դասի թեման և պլանավորում ենք դասն ըստ քայլաշարի, ապա ստացվում է մոտավորապես հետևյալ պատկերը՝

Օրինակ՝

1. Թեման – Բջիջների բաժանման ձևերը

2. Նոր գաղափարների ու հասկացությունների ուսումնասիրություն (վեր հանել աշակերտների նախնական գիտելիքները այս թեմայի շուրջ (հայտորոշիչ թեստ, T-աձև աղյուսակ,մտագրոհի մեթոդ):

3.Վերլուծություն: Այստեղ կարելի է որպես գործիք օգտագործել Վենի դիագրամը, որտեղ կներկայացվի սոմատիկ և սեռական բջիջների բաժանման գործընթացները, բազմացման փուլերը, տարբերությունները, ընդհանրությունները:

4. Ելնելով աշակերտների նախասիրություններից, հոգեբանական խառնվածքից, տրվում է հանձնարարություն ըստ խմբերի՝

1խումբ – Հետազոտել սոմատիկ բջիջների բազմացնան գործընթացը՝ միտոզը:

2-րդ խումբ – Հետազոտել սեռական բջիջների բազմացման գործընթացը՝ մեյոզը:

3-րդ խումբ – Հետազոտել սեռական և սոմատիկ բջիջների բազմացման գործընթացների ընդհանրությունները: Որպես օժանդակ պարագաներ ծառայում են դասագիրքը, աուդիոնյութեր, տեսանյութեր, պաստառներ:

Այս հետազոտությունները աշակերտներին հնարավորություն կտան անցնել ուսուցման հաջորդ՝ ստեղծելու փուլին:

5.Հաջորդ քայլով աշակերտներին հանձնարարվում է ստեղծել գործընթացի վերջնարդյունքը ներկայացնող ռեֆերատ, սահիկաշար կամ գիտական փոքրիկ ակնարկ թեմայի շուրջ՝ ամփոփելով և ընդհանրացնելով հերթական փուլերում ստացած գիտելիքները:[iv]

6. Այս փուլում իրականացվում է գնահատումը: Այն կարող է իրականացվել ինքնագնահատման, փոխադարձ գնահատման կամ զույգերով գնահատման միջոցով, երբ աշակերտը գնահատում է դասընկերոջ աշխատանքը՝ տալով ընդհանուր անդրադարձ:

Այս ամբողջ քայլաշարն ու գործընթացը, որպես ամփոփում, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝ հակիրճ ձևով՝




Գծապատկերից երևում է թե ի՞նչ սկզբունքների հիման վրա է գործում տարբերակված ուսուցումը, որպես ինչպիսի՞ գործիք է ծառայում այն ուսուցչի ձեռքում, ինչպե՞ս է նպաստում ուսուցման աստիճանական իրականացմանը, ի՞նչ է տալիս այն ուսուցչին և աշակերտին և, որ կարևորն է, **աշակերտը իր ցանկությամբ ներգրավվում է դասի ընթացքի մեջ, կատարում ինքուրույն աշատանքներ, սովորում կատարել ինքնքգնահատում, փոխադարձ գնահատում ըստ ստացված արդյունքների, կարողանում վերլուծություն կատարել, ապահովել հետադարձ կապ, ձեռք բերել ինքնավստահություն:** Իսկ, որպեսզի աշակերտը հասնի այս ամենին, նա պետք է պատասխանատվություն կրի իր և ընկերների համար, սովորի հաղթահարել դժվարությունները, ստանձնել պարտավորություններ և չվախենալ դրանք իրականացնելուց: Ուսուցչի գործունեության վերջնարդյունքն է ձևավորել քաղաքացի, ով օժտված կլինի հմտություններով, կարողություններով, կունենա խմբում աշխատելու կարողունակություն, կունենա գիտելիքների որոշակի պաշար ինչը կօգտագործի կյանքում, կզարգացնի մեր երկրը տարբեր ոլորտներում:[v]

Տարբերակված ուսուցման դրական կողմն այն է, որ շատ մեծ արդյունավետություն ունի օժտված և հատուկ կարիքներ ունեցող աշակերտների համար: Այն նաև մեծ պատասխանատվություն է ձևավորում աշակերտի մեջ իր կամքով ընտրած առաջադրանքն իրականացներու նկատմամբ: Այդուհանդերձ, այն ժամանակատար է և դասը պլանավորելու համար բավականաչափ ժամանակ է պահանջում ուսուցչից:[vi]

## Գլուխ 1.3 Տարբերակված ուսուցում մեթոդի կիրառումը իմ դասին

Ուսումնասիրելով «Տարբերակված ուսուցում» մեթոդը, փորձեցի տարբերակված դաս իրականացնել 6-րդ դասարանում, որտեղ դասավանդում եմ բնագիտություն առարկան: Դասարանը բազմաստիճան է, ըստ սովորողների կրողությունների՝ ոչ միատարր: Այնտեղ կան նաև երկու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ՝ Սառան և Հովհաննեսը: Սառան առավել ցածր մտավոր կարողություների տեր է, բայց լավ նկարում է և շատ գեղեցիկ գրում է, իսկ Հովհաննեսը՝ միջին աստիճանի վկայագրված երեխա է: Իմ նպատակն էր դասը ընկալելի դարձնել՝ աշակերտների միջև փոխօգնության, համագործակցության և տարբերակված դասի մեթոդի միջոցով: Դասի թեման աշակերտներին ծանոթ էր կենցաղային իմաստով: Կանխավ պատկերացնում էի բոլոր խմբերի աշխատանքի մեծ արդյունավետությունը վերջնարդյունքում: իմ ուսումնասիրությունը կենտրոնացած էր, հատկապես, այդ երկու ԿԱՊԿՈՒ աշակերտների վրա: Ուշադիր, բայց աննկատ, հետևում էի խմբերում աշխատանքի ժամանակ ձևավորվող փոխհարաբերություններին, մյուս աշակերտների և երկու ԿԱՊԿՈՒ աշակերտների միջև ձևավորվող փոխվստահության, փոխհամագործակցության ընթացքին: Զգացվում էր, որ ոչ միայն մնացած աշակերտները, այլև Սառան ու Հովհաննեսը ևս, մեծ պատասխանատվությամբ են վերաբերում իրենց դերին, ստացած հանձնարարությանը: Դասը «Այրում: Հրդեհի մարում» թեման էր: Ստորև ներկայացնում եմ օրվա դասի պլանը վերջնարդյունքով:

Ամսաթիվ-----13.09.23

Դասարանը----------6--րդ

Դասի թեման----------Այրում: Հրդեհի հանգցնելը

Դասի նպատակը--------Աշակերտները կուսումնասիրեն ի՞նչ է հրդեհը, ինչպե՞ս է առաջանում, Ի՞նչ վտանգներ է հարուցում այն:

Դասի վերջնարդյունքը

1.կրթական ----------Աշակերտները կիմանան կրակի առաջացման պայմանները, անուշադրության դեպքում դրա հարուցած վտանգները, հետևանքները, կրակը ճիշտ օգտագործելու ձևերը կենցաղում

2.դաստիարակչական ---- Կցուցաբերեն այլընտրանքային եղանակով կրակ ստանալու և տարբեր ձևերով այն հանգցնելու կարողունակություն

Կիրառվող մեթոդներ --------- 1.Մտագրոհ, 2. զրույց պատահաբար որևէ մեկի կողմից առաջացրած հրդեհի դեպքի մասին , 3.Т-աձև աղյուսակ

Դասի ընթացքը ----------Խմբային աշխատանք երեք խմբով, ուղղորդված գործնական աշխատանք

1-ին խումբ – ուսումնասիրում է ի՞նչ է հրդեհը, ինչպե՞ս կարող է

Բնության մեջ հրդեհ առաջանալ բնական կամ մարդածին ճանա

պարհով

2-րդ խումբ – Ուսումնասիրում է ինչպե՞ս կարելի է կրակ ստանալ

Տարբեր եղանակներով

3-րդ խումբ – Ուսումնասիրում է կրակի հանգցնելու պայմանները

և եղանակները

( Սառան՝ ով մտավոր շատ ցածր ունակություններ ունի, ընդգրկ-

Վում է 3-րդ խմբում: նա կնկարի հրդեհի պատկեր, կրակի վրա

Ջուր լցնելու պատկեր: Նա կստեղծի պաստառ հրդեհային տեսա

ռանով, կպատմի իր նկարի մասին: Հովհաննեսը, ով միջին աստ

իճանի ԿԱՊԿՈՒ աշակերտ է, կընդգրկվի 2-րդ խմբում: Նա ցույց

Կտա կրակի ստացման եղանակ, կպատմի այդ մասին ):

կշռադատման փուլ– Օգտագործվում է «Ելքի քարտ» մեթոդը, Т-աձև աղյուսակ՝ նշել

Կրակի առաջացման պայմանները և կրակի մարման պայմանները

ները, ինքնուրույն աշխատանք –փորձով կիրառել այսօրվա սո

վորածը։ Մի խումբը ստեղծում է կրակ, մյուս խումբերից Սա-

ռան ու Հովհաննեսը առանձին-առանձին տարբեր ձևերով

հանգցնում են այն։

Միջառարկայական կապերը – 1. հայոց լեզու, 2.քիմիա, 3.ֆիզիկա, 4.բնություն

Դասի պարագաները – մետաղյա սկուտեղներ, լուցկի, թուղթ, չոր խոտ, ջուր, ապակե զանգ, հող, հին հագուստի կտոր, կայծքար, խոշորացնող ապակի, լույսի աղբյուր։

Ամփոփում

Բաժանվում են թերթիկներ հետևյալ հարցաշարով՝

Դասարանը----------

Անուն ազգանուն----------

Դասի թեման----------

Դասի տևողությունը ----------

Ես այս դասից օգուտ ստացա, թե՞ ոչ ----------

Ես այս թեմայից մինչև այսօրվա դասը շատ բան գիտեի, թե՞ քիչ ----------

Ես այս դասից շատ բան սովորեցի թե՞ քիչ ----------

Ես սովորածս կհիշեմ թե՞ ոչ ----------

Ես կօգտագործեմ այսօրվա ստացած գիտելիքներս կյանքում, կենցաղում թե՞ ոչ ----------

Խմբով աշխատելը օգտակար եղա՞վ ինձ համար----------

Խմբային աշխատանքը հետաքրքի՞ր էր----------

Կցանկանայի՞ հաճախակի կիրառվեր խմբային աշխատանք դասի ժամանակ----------

Գնահատում -----ըստ մասնակցության աստիճանի և ըստ գնահատման սանդղակի

Տնային հանձնարարություն --------Դաս 1.4, գրել անտառում հրդեհի առաջացման պատճառի մասին փոքր շարադրություն և պատրաստել սահիկաշար:

Ներկայացնում եմ դասի վերլուծությունը

1.Դասը շատ հետաքրքիր էր

2.Նախնական գիտելիքներ մինչ այս դասը

3.Կմտապահեմ և կհաղորդեմ ուրիշներին

4.Կցանկանայի հաճախ կիրառվեր խմբային

Աշխատանք դասի ժամանակ




Դասի սկզբում Սառան 1, 2 բոպե ոչինչ չէր անում: Բայց հետո ընկերների քաջալերանքը, այն մասին, որ նա լավ է նկարում և դա իրենց խմբին օգնելու է առաջադրանքը լավ կատարել, խթանեց նրան և նա սկսեց ոգևորված նկարել, հարցնել լա՞վ է ստացվում թե՞ ոչ: Նույնիսկ, ընկերներին զգուշացնում էր լուցկու վառելուց առաջացող վտանգի մասին: Խմբում աշխատելիս աստիճանաբար նկատվում էր Սառայի ոգևորությունը, կարծես գիտակցում էր իր աշխատանքի կարևորությունը: Մյուս խմբի աշխատանքում ներգրավվել էր Հովհաննեսը: Նա նույնպես ոգևորված փորձում էր պատմել կրակի ստացման մեկ-երկու ձև: Խմբերում աշխատող բոլոր աշակերտները բարձր պատասխանատվությամբ և հաճույքով աշխատում էին: Նրանք շատ բան ավելացրեցին իրենց ունեցած նախնական գիտելիքներին: Կարևոր և կայուն իմացությամբ, ընկերների փոխօգնությամբ ու համագործակցությամբ, տարբերակված ուսուցմամբ իրականացված դասը հարստացրեց նրանց իմացածն ու կենսական փորձը, իմացան ինչպե՞ս ոչ սովորական պայմաններում կրակ ստանալ, եթե չունեն լուցկի, իմացան նաև ինչպե՞ս այլ ձևով հանգցնել կրակը, ինչպե՞ս կարելի է օգտագործել կրակի ծուխը ազդանշան հաղորդելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբերակված ուսուցունումն անցկացնելիս նպաստավոր մեթոդ է ուսումնական քարտերով առաջադրանքների

կիրառումը, որը հնարավորություն է տալիս ավելի մոտիվացնել աշակերտներին, յուրաքանչյուրին տալ իր հնարավորություններին համապատասխան հանձնարարություն: Ուսումնական քարտերը պետք է համապատասխանեն ուսումնական նպատակին, դասարանի մակարդակին, ակտիվությանը: Ինչպիսի՞ն պետք է լինի բարդության աստիճանը, քանի՞ առաջադրանք պետք է ներառի ուսումնական քարտը, ի՞նչ տեսակի պատասխան է պահանջելու նշված առաջադրանքը: Ուսումնական քարտերը պետք է կազմել պարզ: Դրանցում եղած առաջադրանքի պահանջը պետք է հասկանալի լինի աշակերտի համար: Քարտերի տեսքն ու կառուցվածքը ևս պետք է գրավիչ լինեն՝ աշակերտներին ոգևորեն դեպի հիմնախնդիրները լուծելու, խորհելու, հարցեր առաջադրելու: Սովորողներին ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները տրվում են ըստ հանրակրթական դպրոցի երեք փուլերի՝ տարրական, միջին և ավագ: Ուսումնական քարտերի առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը, բացթողումների լրացմանը կամ էլ՝ սովորողի առաջընթացին: Քարտերով առաջադրանք կարելի է տալ որպես տնային աշխատանք այն աշակերտներին, ովքեր ունեն տվյալ ուսումնական նյութը կրկնելու և ամրապնդելու, տվյալ թեմայի շրջանակներում ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու կարիք: Ուսուցիչը կարող է կազմել ուսումնական քարտերի այնպիսի հավաքածու, որը նպատակաուղղված է զարգացնելու աշակերտի ստեղծագործական ունակությունը: Այդ առաջադրանքները պետք է այնպիսի հարցեր ընդգրկեն, որ աշակերտը բազմակողմանի ուսումնասիրություն կատարի: Քարտային աշխատանքը պետք է միատարր հարցեր չպարունակի: Կարևոր է, որ ուսուցիչը չմիջամտի քարտի ընտրությանը՝ չտարբերակի աշակերտներին ուժեղների և թույլերի, այլ պետք է թույլ տալ, որ աշակերտն ըստ իր ցանկության ընտրի և կատարի իր կարողությանը համապատասխան կամ իրեն հետաքրքրող առաջադրանք: Փոքր խմբով աշխատելիս՝ խմբի ամեն անդամ ունենում է իր բաժին առաջադրանքը: Հետո ամփոփվում և ստուգվում է արդյունքը: Քարտերը կարող են լինել ընտրովի կամ բաց պատասխաններով: Լինում են նաև տնային առաջադրանքի համար քարտեր, որոնք հարցեր չեն պարունակում: : Ուսումանական քարտերի առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը, բացթողումների լրացմանը կամ սովորողի առաջընթացին: Ուսումնական քարտերն օգտագործելիս պետք է հաշվի առնել ներկայացված թույլ և ուժեղ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: 1

## Գլուխ 1.4 Տարբերակված ուսուցում մեթոդի արժևորումը

### Եզրակացություն

Ուսումնասիրելով « Տարբերակված ուսուցում» մեթոդը, հանգեցի այն եզրակացությանը, որ այն հետաքրքիր, դասապրոցեսի համար նպատակահարմար, աշակերտների ուսումնառությունը հեշտացնող, մոտիվացնող, իրենց հետաքրքրությունը խթանող մեթոդներից մեկն է: Այն, թեև ժամանակատար է, բայց բավականաչափ արդյունավոտ է: Այդ մեթոդի կիրառմամբ դասն ավելի հետաքրքիր ու հեշտ ընկալելի է դառնում գիտելիքների տարբեր մակարդակ ունեցող ու տարբեր ունակությունների տեր աշակերտների համար: Այն նպաստում է սովորողների համագործակցային կարողությունների, փոխօգնության ձևավորմանը, հմտությունների զարգացմանը, կայուն ու մնայուն գիտելիքի ձեռք բերմանը, խմբում աշխատելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը, տարբեր կարողունակությունների ձևավորմանն ու դրսևորմանը, հասարակությանը լիարժեքորեն ինտեգրվող մարդու դաստիարակությանն ու ձևավորմանը:



1. Ամիրջանյան Յու.: Երևան, <>, 2005թ, 456 էջ (էջ 94-95) 2. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր: ՀՀ կրթության և գիտության նախարարի 23.11.2007թ.հմ.1153-Ա/ք հրամանի: 88 էջ 3. Միրզաբեկյան Ջ. Մ., Թաղիադյան Մ., Երևան 1971, էջ 19-43, 124-

https://www.youtube.com/watch?v=c-eaHL7-TlE

The requested URL /teachers/posters/broshura/broshuram

ii

iii

iv

v

vi https://mail.ru/search?mstatid=812209&type=video&gp=812209&fr=chxtnhp15.1.4.3&q=%D5%BF%D5%A1%D6%80%D5%A2%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4&serp_path=%2Fvideo%2Fpreview%2F14912086631003375690

## EduArmenia 2020 աշխատաժողով, Խոսնակ Աննա Ստեփանյան, Թեմա Տարբերակված ուսուցում

Дата добавления8 июл 2020

https://youtu.be/B-kDAY9wZRs Տարբերակված ուսուցման մեթոդ՝ «Խորանարդիկներ»

https://mail.ru/search?mstatid=812209&type=video&gp=812209&fr=chxtnhp15.1.4.3&q=%D5%BF%D5%A1%D6%80%D5%A2%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4&serp_path=%2Fvideo%2Fpreview%2F14912086631003375690

# Տարբերակված ուսուցում







Հարցադրումների վրա հիմնված ուսուցում

Համագործակցային ուսուցում

Ձևավորող և ամփոփիչ գնահատման վրա հիմնված ուսուցում

Լոկալ և գլոբալ համատեքստում իրականացվող ուսուցում

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ Համագործակցություն

Հաղորդակցություն

Ինքնակառավարում

Ստեղծագործական մտածողություն Կազմակերպչական

Ակտիվ հմտություն

Փոխանցելի հմտություն

Անդրադարձ

Հարցադրումների վրա հիմնված ուսուցում
Տարբերակված ուսուցում
Համագործակցային ուսուցում
Ձևավորող և ամփոփիչ գնահատման վրա հիմնված ուսուցում
Լոկալ և գլոբալ համատեքստում իրականացվող ուսուցում
Գլխավոր գաղափարների և հասկացությունների վրա հիմնված ուսուցում
ՄՏԱՑԿԱՆ
Քննադատական մտածողություն
Ստեղծագործական մտածողություն
Փոխանցելի հմտություններ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
Համագործակցություն
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
Հաղորդակցում
ԻՆՔՆԱԿԱՏԱՎԱՐՄԱՆ
Կազմակերպական
Աֆֆեկտիվ հմտություններ
Մոտիվացիա
ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ
Տեղեկատվական գրագիտություն
Մեդիա գրագիտություն


Քայլ 1. Ներկայացնել հաջորդ դասի թեման՝ իրականացնելով նախնական գնահատում (KWL, pre-test)
Քայլ 2 Եզնելով կարողություններից՝
մակարդակ 1: լրացնել Ֆրայերի մոդելը՝ բացատրելով "քաղաք-հասակարգ" և "կայուն քաղաք" հասկացությունները
մակարդակ 2: լրացնել Վենի դիագրամը՝ վերլուծելով գծային և շրջանաձև քաղաքային համակարգերը
մակարդակ 3: ըստ ընտրության հետազոտել «Էկո-քաղաք»/ «Տոկուն քաղաք»/ «Խելացի քաղաք» մոդելներից որևէ մեկը և օգտագործելով SWOT վերլուծական գործիքը՝ գնահատել քաղաքում կիրառվող ռազմավարությունները:
մակարդակ 4 Պատասխանելով թեմայի հարցին՝ 600-700 բառի շրջանակներում գրել էսսե կամ կազմել սահիկաշար (յուրացման առաջադրանք):
Քայլ 3:
Ինքնագնահատում կամ գույգերով գնահատում (rubric, checklist).